ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N <<ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/64-3>>

«11» ապրիլի 2018թ.

ք.Երևան

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Գ. Չթրյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 01.04.2015 թվականի թիվ 956-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Վ. Նահապետյանի որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Երևանի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի կողմից ներկայացված **Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Համբարձումյան 47 շենքի բակի և խաղահրապարակի հիմնանորոգման աշխատանքները** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 **Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 2018թ հուլիսի 31-ը:**

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ,

ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **30** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված

հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **5693500.0 (հինգ միլիոն վեց հարյուր իննսուներեք հազար հինգ հարյուր)** << դրամ, որից **948917.0 (ինը հարյուր քառասունութ հազար ինը հարյուր տասնյոթ) << դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող** բոլոր ծախսերը

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը :

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում << օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի

ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ

սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8..15 Սույն պայմանագրով նախատեսնված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները իրականացնում **Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը:**

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատու	**Կապալառու**
Երևանի քաղաքապետարան	«Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1	Ք. Երևան, 16 թաղամաս 16/29
Կենտրոնական գանձապետարան	«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ
Հ/Հ 900032313174	Հ/Հ 16043026186900
ՀՎՀՀ 02593108	ՀՎՀՀ 01243789
Գ. Չթրյան----------	Վ. Նահապետյան ----------
Ստորագրություն	(ստորագրություն)
Կ.Տ	Կ. Տ

Հավելված թիվ 1
«11» ապրիլի 2018 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ << ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/64-3> գնման պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Համբարձումյան 47 շենքի բակի և խաղահրապարակի հիմնանորոգման աշխատանքները

NN	Հիմնավորումը	Աշխատանքների անվանումը	Չափման միավորը	Ծավալը	Միավորի ընդհանուր արժեքը	Ընդհանուր արժեքը
					հազ. դրամ	հազ. դրամ
1	2	3	4	5	6	7
		Քանդման աշխատանքներ				
1	Բ23-247 Բ23-223 Բ23-234	Տարածքի մաքրում, աղբի հավաքում, տեղափոխում եւ բարձում ինքնաթափ մեքենաների վրա /930մ²/	տն	1.860	0.871	1.620
2	Շ310-13	Աղբի տեղափոխում մինչև 13կմ	տն	1.860	1.886	3.508
3	Ե27-36	Բազալտե եզրաքարերի ապամոնտաժում /բետոնե հիմքով/, հետագա վերատեղադրմամբ /30%-ի չափով նոր նյութով փոխարինմամբ/	գմ	268.420	0.649	174.205
4	Բ9-26 կիր.	Մետաղական ճաղաշարի ապամոնտաժում	գմ	25.600	0.347	8.883
5	Ե27-33	Ասֆալտբետոնե շերտի քանդում իր նախաշերտով, 193.8քմ	մ³	9.690	2.862	27.733
6	Ե46-109	Բազալտե սալերի քանդում	մ²	1.400	0.321	0.449
7	Բ19-1 Բ19-2	Առկա ոռոգման ջրագծի խողովակների ապամոնտաժում	գմ	77.000	0.342	26.334
8	Շ310-2 տ.մ.կ 29	Նստարանների ապամոնտաժում, հետագա վերատեղադրմամբ	հատ	2.000	1.131	2.262
9	Շ310-2 տ.մ.կ 29	Խաղասարքերի ապամոնտաժում	հատ	1.000	1.131	1.131
10	Ե17-91 K=0.6	Ցայտաղբյուրի ապամոնտաժում	կ-տ	1.000	1.253	1.253
11	Ե48-253 կիր.	Տարածքի մաքրում կոճղաշիվերից և անկանոն աճած թփերից	հատ	25.000	0.044	1.100
12	Ե1-961	III կարգի բնահողի մշակում ձեռքով, կողլիցքով	մ³	13.797	1.623	22.393
13	Ե1-969 Ե1-1184	Բնահողի ետլիցք ձեռքով մշակված բնահողից տոփանելով	մ³	13.797	0.994	13.714
14	Շ310-13 տ.մ.կ 29	Շին. աղբի և ավելորդ բնահողի բարձում ինքնաթափ մեքենաների վրա եւ տեղափոխում մինչև 13կմ	տ	13.200	2.476	32.683
		Կառուցողական աշխատանքներ				
		Բազալտե եզրաքարերի վերատեղադրում				
1	Ե27-22-1	Խճի նախապատրաստական շերտի իրականացում 7սմ հաստությամբ	մ³	3.290	6.121	20.138
2	Ե27-82-1	Բետոնե եզրաքարերի վերատեղադրում	գմ	187.920	1.878	352.914
		Բազալտե եզրաքարերի տեղադրում 300x150 մմ չափերով				
1	Ե27-22-1	Խճի նախապատրաստական շերտի իրականացում 7սմ հաստությամբ	մ³	1.408	6.121	8.618
2	Ե27-82-1	Բետոնե եզրաքարերի տեղադրում 300x150մմ չափերի	գմ	80.500	6.554	527.597
		Բետոնե եզրաքարերի տեղադրում 200x80 մմ չափերով				
1	Ե27-22-1	Խճի նախապատրաստական շերտի իրականացում 5սմ հաստությամբ	մ³	0.242	6.121	1.481
2	Ե27-79	Բետոնե եզրաքարերի տեղադրում 200x80մմ չափերի	գմ	32.300	3.059	98.806

		Բետոնե սալիկների (տոմետ) տեղադրում				
1	E27-22-1	Խճի նախապատրաստական շերտի իրականացում 5սմ հաստությամբ	մ^3	0.320	6.112	1.956
2	E27-19	Հարթեցնող շերտ բետոնե սալերի տակ 4սմ հաստութ.չոր ց/ա շաղախով	մ^3	0.256	11.627	2.977
3	E27-176	Սալիկապատում բետոնե սալիկներով	մ^2	6.400	3.702	23.693
		Հենապատերի վերանորոգում				
1	E46-51	Անցքերի բացում գոյություն ունեցող բետոնե հենապատում, Φ12մմ	հատ	25.000	0.264	6.600
2	E6-86	Φ10A500c ամրանների տեղադրում, L=200մմ	տ	0.030	310.974	9.329
3	շուկա	Շաղափած անցքերի լցափակում պոլիմերցեմենտային լուծույթով	կգ	2.100	2.266	4.759
4	E6-90	Հենապատի բարձրացում B15 դասի բետոնով	մ^3	1.800	33.003	59.405
5	E15-201	Սվաղում ցեմենտավազային շաղախով 1:3 հարաբերությամբ	մ^2	53.700	1.203	64.601
		Ցայտաղբյուրի պատրաստման, տեղադրման աշխատանքներ				
1	E6-20	Ցայտաղբյուրի տեղի բետոնացում B15 դասի բետոնով	մ^3	0.030	31.303	0.939
2	E17-91 շուկա	Ցայտաղբյուրի պատրաստում և տեղադրում մշակված գրանիտե քարից	հատ	1.000	82.864	82.864
3	շուկա	Ամրան Φ14A500c	տ	0.001	195.561	0.266
4	շուկա	Պող. թիթեղ 200x200x2մմ	մ^2	0.040	5.357	0.214
5	շուկա	Ցինկապատ բաժակ Φ200մմ, h=100մմ	հատ	1.000	6.802	6.802
6	շուկա	Ցայտիչի տեղադրում Φ15մմ	հատ	1.000	4.676	4.676
7	E23-1	Ավազի նախապատրաստական և պաշտպանիչ շերտերի իրականացում	մ^3	8.930	2.966	26.486
8	E22-448	Հավաքովի ե/բ դիտահորի կառուցում	մ^3	0.170	41.998	7.140
9	E11-11	Բետոնե նախապատրաստական շերտ	մ^3	0.120	23.535	2.824
10	E11-5	Թեթև խիճ	մ^3	1.300	5.974	7.766
11	P9-118	Մետաղական դռնակ	տ	0.015	395.711	5.936
12	շուկա	Ռետին	գմ	3.000	0.340	1.020
13	շուկա	Ծխնի	հատ	2.000	0.255	0.510
14	շուկա	Փական	հատ	1.000	1.275	1.275
15	շուկա	Ջերմամեկուսիչ սալ (երկտավր 30x3 L=400մմ-2հատ, 30x3 L=590մմ -4 հատ պլաստմաս, 30x 3 L=490մմ 8հատ պլաստմաս, խարիսխ-4հատ, փրփրապլաստ h=100մմ -1հատ, հեղյուս L=140մմ, Φ 8-6հատ)	կոմպ	1.000	13.604	13.604
16	E22-117	Ջերմամեկուսիչ նյութ	գմ	1.500	0.297	0.446
17	շուկա	Շին. սիլիկոն	հատ	1.000	0.833	0.833
18	E15-613	Մետաղական դռնակի յուղաներկում	մ^2	3.000	0.434	1.302
19	E22-117	Պոլիպրոպիլենային լայնուկավոր խողովակների մոնտաժում de63 (կոյուղու)	գմ	9.000	0.966	8.694
20	E22-117	Պոլիպրոպիլենային եռակցվող խողովակների մոնտաժում de15, PN=1.0ՄՊա (խմելու ջրի)	գմ	17.000	0.331	5.627
21	E22-117	Պլաստմասե պատյան խողովակ DN32	գմ	8.000	0.382	3.056
22	E16-134	Մետաղե գնդային փական DN15	հատ	1.000	2.903	2.903
23	E22-312	Պոլիէթիլենե (PE) de15 խողովակների լվացում, ախտահանում	կմ	0.028	47.946	1.342
		Այլ աշխատանքներ				
1	E15-77	Աստիճանների երեսպատում բազալտե սալիկներով 30մմ հաստ.	մ^2	1.800	11.728	21.110
2	E15-77	Աստիճանների դիմային մասերի երեսպատում բազալտե սալիկներով 20մմ հաստ.	մ^2	0.900	10.425	9.383
3	շուկա	Աստիճանների բազրիքների պատրաստում և մոնտաժում, յուղաներկմամբ	գմ	3.600	3.146	11.326
4	շուկա	Անձրևաջրերի հեռացման հանգույցի /ցանց/ մոնտաժում, 490x770մմ	լրակ.	1.000	59.518	59.518
5	E22-119	Պոլիպրոպիլենային խողովակների մոնտաժում Φ110x2.7մմ (կոյուղու)	գմ	34.000	1.223	41.582
6	Գնահաշվարկ N1	Մետաղական ճաղաշարի իրականացում	գմ	67.500	5.595	377.663
7	E9-46	Շքամուտքերի աստիճանահարթակների ճաղաշարերի բացակայող մետաղական մասերի լրացում	տ	0.070	441.045	30.873
8	E33-82	Մետաղական մասերի յուղաներկում	տ	0.070	11.376	0.796
9	Գնահաշվարկ N3	Մետաղական աղբամանների ձեռք բերում /պատրաստում/ և տեղադրում	հատ	9.000	8.623	77.607
10	Գնահաշվարկ N2	Նստարանների ձեռք բերում /պատրաստում/ և տեղադրում	հատ	4.000	16.088	64.352
11	E6-2	Վերատեղադրվող նստարանների ոտքերի բետոնացում B15 դասի բետոնով	մ^3	0.150	36.391	5.459
12	E27-19	Խաղահրապարակներում կապույտ ավազի [illegible] շերտի իրականացում, 10սմ հաստ.	մ^3	1.600	1.946	3.114

13	Գնահաշվարկ N5	Նոր մանկական խաղասարք «4 տեղանոց պտտվող կարուսել»-ի ձեռք բերում /պատրաստում/ և տեղադրում	հատ	1.000	167.704	167.704
14	Գնահաշվարկ N6	Նոր մանկական խաղասարք «Հորիզոնական ճոճանակ»-ի ձեռք բերում /պատրաստում/ և տեղադրում	հատ	1.000	40.718	40.718
15	E27-43 E27-43-1	Խճի նախապատրաստական շերտ h=7սմ	մ^2	193.800	0.616	119.381
16	E27-169	Մանրահատիկ ասֆալտբետոնե ծածկույթի իրականացում 3սմ հաստությամբ	մ^2	193.800	2.180	422.484
17	E1-1592	Բուսահողի մշակում էքսկավատորով, ինքնաթափ մեքենաների բարձելով	մ^3	35.070	0.356	12.485
18	C310 տ.մ.կ. 29	Բուսահողի տեղափոխում 50կմ	տ	52.605	5.007	263.393
19	E48-168 E48-169	Բուսահողի փռում ձեռքով կանաչ տարածքներում, 100մմ հաստությամբ	մ^2	350.700	1.310	459.417
20	E48-166	Նախապատրաստում սերմի ցանելու համար	մ^2	350.700	0.133	46.643
21	E48-214	Սերմի ցանում 1մ^2 - 35գր	մ^2	350.700	0.185	64.880
		Էլեկտրատեխնիկական մաս				
1	E27-33	Ասֆալտբետոնե շերտի քանդում իր նախաշերտով	մ^3	0.210	2.862	0.601
2	E1-962	Բնահողի մշակում /խրամուղում/, ձեռքով	մ^3	19.650	2.863	56.258
3	8-142-1	Անկողնակի պատրաստում	գմ	57.800	0.184	10.635
4	շուկա	Ավազ /ստորին և վերին պաշտպանիչ շերտ 10սմ հաստ., 2.1+2.1մ^3 /	մ^3	4.200	1.502	6.308
5	8-417-7	Խողովակ վինիպլաստե Ø50մմ	գմ	57.800	0.410	23.698
6	E8-145-1	ԱԲԲԳ 4x16մմ^2 հատվածքով մալուխի անցկացում /ստորգետնյա/	գմ	57.800	0.604	34.911
7	շուկա	Պաշտպանիչ /զգուշացնող/ ժապավենի տեղադրում 300մմ լայնքով	գմ	57.800	0.187	10.809
8	E1-969	Բնահողի ետլիցք ձեռքով, տոփանումով	մ^3	15.100	0.829	12.518
9	E27-43 E27-43-1	Խճի նախապատրաստական շերտ h=7սմ	մ^2	3.000	0.616	1.848
10	E27-169 E27-172	Մանրահատիկ ասֆալտբետոնե ծածկույթի իրականացում 4սմ հաստությամբ	մ^2	3.000	2.875	8.625
11	C310-13 տ.մ.կ 29	Ավելորդ բնահողի եւ շին. աղբի բարձում ինքնաթափ մեքենաների վրա եւ տեղափոխում 13կմ	տ	7.350	2.476	18.199
12	Գնահաշվարկ N13	Լուսավորության հենասյուների տեղադրում H=6.1մ	հատ	2.000	106.052	212.104
13	8-594-1	Բացակայող ապակե պլաֆոնների տեղադրում /NCL-4U-840-E27/ էկոնոմ լամպով 85վտ, կամ համարժեք	հատ	2.000	9.990	19.980
		Ոռոգում				
		Տեխնոլոգիական աշխատանքներ				
1	E22-397	Միացում գործող ջրագծին	տեղ	1.000	2.146	2.146
2	E22-64	Խողովակաշարի անցկացում պողպատե էլեկտրաեռակցվող խողովակներից Ø57x3.0մմ, հիդրավլիկ փորձարկումով	գմ	74.000	1.443	106.782
3	E22-64	Խողովակաշարի անցկացում պողպատե էլեկտրաեռակցվող խողովակներից Ø40x2.5մմ, հիդրավլիկ փորձարկումով	գմ	50.000	1.000	50.000
4	E22-368	Թուջե կցաշուրթավոր սողնակների տեղադրում 30ч 66բ Ø50մմ Ру1.0ՄՊա	հատ	2.000	11.116	22.232
5	E22-429	Պողպատե կցաշուրթերի եռակցում Ø50	հատ	4.000	2.175	8.700
6	Գնահաշվարկ N14	Ջրթող հանգույցների մոնտաժում	կ-տ	9.000	5.662	50.958
7	Գնահաշվարկ N15	Խողովակաշարի դատարկման հանգույցի մոնտաժում	կ-տ	2.000	4.360	8.720
8	E22-362	Պողպատե ձեւավոր մասերի մոնտաժում	տ	0.007	1719.014	12.033
9	շուկա	Հեղույս M16, L=60մմ	կգ	2.352	0.893	2.100
10	շուկա	Պնդօղակ M16	կգ	0.672	0.893	0.600
11	E15-614	Պողպատե խողովակների ներկում 2 շերտ	մ^2	19.700	0.819	16.134
12	E22-335	Պողպատե խողովակների լվացում	գմ	124.000	0.022	2.728
		Շինարարական աշխատանքներ				
1	E1-961	Բնահողի մշակում ձեռքով	մ^3	0.600	1.623	0.974
2	E1-969	Բնահողի ետլիցք ձեռքով	մ^3	0.600	0.829	0.497
3	E27-33	Ասֆալտբետոնե շերտի քանդում իր նախաշերտով, 19.0քմ	մ^3	1.330	2.862	3.806
4	E27-43 E27-43-1	Խճի նախապատրաստական շերտ h=7սմ	մ^2	19.000	0.616	11.704

5	E27-169	Մանրահատիկ ասֆալտբետոնե ծածկույթի իրականացում 3սմ հաստությամբ	մ²	19.000	2.180	41.420
		Ընդամենը				4744.583
		ԱԱՀ, 20%				*948.917*
		Ընդամենը				5693.500

Պատվիրատու
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900032313174
ՀՎՀՀ 02593108

Գ. Չթրյան----------
Ստորագրություն

Կ.Տ

Կապալառու
«Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ
Ք. Երևան, 16 թաղամաս 16/29
«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ
Հ/Հ 16043026186900
ՀՎՀՀ 01243789

Վ. Նահապետյան ----------
(ստորագրություն)

Կ. Տ

Հավելված թիվ 2
«11» ապրիլի 2018 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ << ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/64-3> գնման պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

« Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Համբարձումյան 47 շենքի բակի և խաղահրապարակի հիմնանորոգման » ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	**Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Համբարձումյան 47 շենքի բակի և խաղահրապարակի հիմնանորոգման աշխատանքներ**	Պայմանագիրը ուժի մտնելու օրը:	Կատարման նախընտրելի ժամկետը է սահմանվում՝ մինչև 31.07.2018թ
ԸՆԴԱՄԵՆԸ			

Պատվիրատու
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900032313174
ՀՎՀՀ 02593108

Գ. Չթրյան----------
¥ստորագրություն°
Կ.Տ

Կապալառու
«Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ
Ք. Երևան, 16 թաղամաս 16/29
«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ
Հ/Հ 16043026186900
ՀՎՀՀ 01243789

Վ. Նահապետյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 3
«11 » ապրիլի 2018 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ << ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/64-3> գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի												
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**									
			ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45600000	**Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Համբարձումյան 47 շենքի բակի և խաղահրապարակի հիմնանորոգման աշխատանքներ**	**4 417 438**	**4 417 438**	**4 417 438**	**5 693 500**	**5 693 500**	**5 693 500**	**5 693 500**	**5 693 500**	**5 693 500**	**5 693 500**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

Պատվիրատու
Երևանի քաղաքապետարան
ք.Երևան 0015, Արգիշտիի փ. 1
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900032313174
ՀՎՀՀ 02593108

Գ. Չթրյան----------
Ստորագրություն
Կ.Տ

Կապալառու
«Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ
Ք. Երևան, 16 թաղամաս 16/29
«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ
Հ/Հ 16043026186900
ՀՎՀՀ 01243789

Վ. Նահապետյան ----------
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված թիվ 4
«11» ապրիլի 2018 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ << ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/64-3> գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքի							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
«11» ապրիլի 2018 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ << ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/64-3> գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ *«ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/64-3»*

(պայմանագրի կատարման ապահովում)

ք. Երևան

«11» ապրիլի 2018 թ.**

«Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ, ի դեմս Ընկերության տնօրեն Վ. Նահապետյանի նույնականացման քարտ 008841298 05.10.2017թ 004-ի կողմից՝ որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է **Երևանի քաղաքապետարան** * (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ *«ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/64»* ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն << կենտրոնական բանկի հաստատած՝ <<Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների>>:

1.3 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը (այսուհետ՝ պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիր) ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին (այսուհետ՝ Բանկ)՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:

1.4 Բանկը պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը ընդունում է կատարման՝ Պատվիրատուի կողմից սույն տուժանքի համաձայնագրի և գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման փաստը հաստատող փաստաթղթի բնօրինակները, որոնք նշվում են պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում, Բանկին տրամադրվելու դեպքում:

1.5 Պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

1.6 Սույն համաձայնագիրը և կից պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և վավեր է Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունները ողջ ծավալով կատարելու վերջին օրվան հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

Կապալառու

«Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ
Ք. Երևան, 16 թաղամաս 16/29
«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ
Հ/Հ 16043026186900
ՀՎՀՀ 01243789

Վ. Նահապետյան _____
(ստորագրություն)

Կ. Տ

1.

ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ՝ N

(պայմանագրի կատարման ապահովում)

2. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

3. Ընկերություն (այսուհետ՝ վճարող)՝ «Բիլդինգ Գրուպ» ՍՊԸ

4. Վճարողի բանկը՝ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ

5. Վճարողի հաշվի համարը՝ Հ/Հ 16043026186900

6. Վճարողի ՀՎՀՀ՝ 01243789

7. Վճարողի ՀԾՀ՝

8. Շահառու՝ Երևանի քաղաքապետարան

9. Շահառուի ՀՎՀՀ՝ 02593108

10. Շահառուի բանկը՝ Կենտրոնական գանձապետարան

11. Շահառուի հաշվի համարը /հշ.N/ 900015211429

12.Գումարը թվերով և բառերով՝ **569350/հինգ հարյուր վաթսունինը հազար երեք հարյուր հիսուն/**

13.Արժույթը (բառերով և կոդով)՝)՝ ՀՀ դրամ AMD

14.Գործարքի /վճարման/ նպատակը՝ *պայմանագրի կատարման ապահովում*

15.Պայմանագրի ծածկագիրը՝ *ԵՔ-ԲՄԱՇՁԲ-18/64-3*

16.Փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանը 17. կից՝---էջ

19.ա. Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ 19.բ. Կ.Տ.	18.ա. Վճարողի ստորագրությունները՝ Վ. Նահապետյան /_____/ /_____/ 18.բ. Կ.Տ.
Կատարված է շահառուի բանկի կողմից 20.ա. /_____/ /ստորագրություն/ 20.բ. Կ.Տ. "___" ___ 20___ թ.	Կատարված է վճարողի բանկի կողմից 21.ա. /_____/ /ստորագրություն/ 21.բ. Կ.Տ. 22.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

[1] *Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի ապառաքիր վավերացումների և տրամադրման կարգի*